Ս. Դ. ԱՎԱԳՅԱՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՆԼԵԳԱԼ ՕՐԳԱՆՆԵՐԸ ՇՈՒՇԻՈՒՄ՝ ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՑ ԱՌԱՋ

XIX դարի վերջերին ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում նոր թափ է հաղորդվում հեղափոխական ելույթներին։ Մարքսիստական գաղափարները հետզհետե տիրապետում էին լայն աշխատավորական մասսաներին։ Այդ բանին մեծապես նպաստում էին Թիֆլիսում, Բաքվում և այլ քաղաքներում գործող մարքսիստական խմբակները։

Առաջադիմական շարժումը նկատելի էր նաև Ղարաբաղում, մասնավորապես դպրոցներում։ Ուսուցիչներից շատերը, որոնք սերտ կապերի մեջ էին առանձին հեղափոխական գործիչների հետ, քաղաքական հանձնարարություն էին կատարում։ Հայտնի է, օրինակ, որ Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում 1891 թ. նշվել է մայիսի 1-ը՝ աշխատավորների միջազգային համերաշխության օրը։ Հատկապես մեծ ակտիվություն են հանդես բերել դպրոցի ուսուցիչներից Գրիգոր Իսրայելյանը, Անդրեաս Միրզոյանը, Հուսիկ Տեր-Սահակյանը և ուրիշներ։

Արխիվային փաստերը հավաստում են, որ դեռևս 1900 թվականի սկզբներին Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի տարբեր դասարանների աշակերտները ստեղծված իրավիճակի հանդեպ իրենց դժգոհությունը արտահայտում էին զանազան ձևերով։ Նրանց դժգոհությունը լուրջ մտահոգության առարկա էր դարձել թե՛ դպրոցի տեսուչի և թե՛ տեղի ոստիկանական մարմինների համար։ 1900 թ. հունիսի 15-ին կաթողիկոսին ուղարկած ընդարձակ զեկուցագրի մեջ դպրոցի տեսուչը գրում է. «Եղել են դեպքեր, որ շատ անգամ իսկ տարել եմ սեփական անձիս դեմ ուղղված վիրավորանքներ... անտեղի խոսքեր... անվայել լրագրական զրաբանություններ, անդադար հասած անստորագիր նամակներ (մանավանդ տարվա վերջն ու սկիզբը), որոնց գրողի ձեռքը շատ ակնհայտ է եղել... բայց այդ բոլորը համբերությամբ տարվել է ամենամանր հանգամանքները կշռադատելով, որոնք կարող են ամենաչնչին ամպեր հարուցանել դպրոցական հորիզոնի վրա»[1]։

Եվ պատահական չէր, որ շատ սովորողներ ամենաչնչին «անկարգություններին» համար արձակվում էին դպրոցից, հնարավորություն չտանալով նույնիսկ աշակերտելու որևէ տեղ։ Ավելին, աշակերտներին արգելվում էր կարդալ թերթ, ամսագիր, օգտվել պարբերական մամուլից։ Հենց ինքը՝ դպրոցի տեսուչը նույն զեկուցագրի մեջ նշում է, որ 1897—1898 ուս. տարում դպրոցի աշակերտության 7,9 տոկոսը կամ 43 աշակերտ հեռացվել են կատարած «զանցանքների» և «անկարգապահության» պատճառով։

---

1 ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 56, գործ 415, թ. 169։

Տեսուչը փորձում է կաթողիկոսին հավատացնել, որ ձեռք առած կտրուկ միջոցները տալիս են շոշափելի արդյունք, այլ կերպ ասած՝ վերջին տարում դպրոցից հեռացվել են միայն երեք հոգի։

Բայց տեսուչին այլևս պատիվ չէր բերում ռեալ իրականությունը ճիշտ ներկայացնել էջմիածնի հոգևոր իշխանություններին։ Փաստերը հակառակ պատկեր են ներկայացնում, հետզհետե նոր որակ են կազմում աշակերտական ընդվզումներն ու ըմբոստացումները։ Աշակերտները պահանջում էին ռեալ գիտելիքներ հաղորդել իրենց, աստվածաշնչի և կրոնի փոխարեն սովորեցնել լեզուներ, մանկավարժություն, տիեզերագիտություն և այլն։ Եվ այդ ճշմարտացի բողոքներն էլ խեղդվում էին տեղն ու տեղը։

Մեծ հետաքրքրություն էր ներկայացնում Շուշիի թեմական դպրոցի մի խումբ աշակերտների 1900 թ. դեկտեմբերի 4-ին գրած նամակը էջմիածնի կաթողիկոսին։ «Մենք Շուշվա թեմական դպրանոցի աշակերտներս՝ 1900 թ. ուսումնական տարվա սկզբում նկատելով, որ շատ կաղում է մեր ուսումը և իզուր ենք կորցնում մեր ոսկե ժամերը, շնորհիվ նորան, որ մեր արժանապատիվ հայր տեսուչը մի կողմից կրճատել էր մի շարք առարկաներ, ինչպես տիեզերագիտություն, մանկավարժություն և գյուղատնտեսություն... մյուս կողմից էլ մնացած առարկաները տվել էր այնպիսի ուսուցիչների, որոնց մասնագիտությունից դուրս էին այդ առարկաները, ուստի չէին կարողանում բավարարություն տալ մեր հարցասիրության։ Բացի դրանից, ռուսաց լեզվի և ռուսաց պատմության համար մինչև այն ժամանակ ուսուցիչ չկար և մենք մեր օրերը անց էինք կացնում աննպատակ։

Այդ ի նկատի ունենալով, աշակերտությունը սկսած գ դասարանից մինչև զ դասարանը, կամեցավ մի խնդրով դիմել վարչությանը, այդ պակասը լրացնելու համար, բայց դժբախտաբար դպրանոցի վարչությունը, հանձին հայր տեսչի, փոխանակ հարդելու մեր խնդիրը, շորս աշակերտի դրկեց իրենց սիրելի ուսումից, արձակելով դպրոցից...»[2]։

Ինչ խոսք, աշակերտական շարժումներին նոր բովանդակություն էր հաղորդում 1898 թ. Թիֆլիսում կազմակերպված հայ բանվորների առաջին մարքսիստական խումբը, որի հիմնական նպատակն էր պրոպագանդել շահագործողների դեմ պայքարը, լայն մասսաներին հասցնել առաջադիմական գաղափարները։

Հետագայում, 1902 թ. «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որն ուներ լենինյան իսկրայական ուղղություն, նպաստում էր Շուշիում սովորող երիտասարդության և աշակերտական շարժումների զարգացմանը։ Դպրոցներում ստեղծվում էին սոցիալ-դեմոկրատական խմբակներ, որոնք փաստորեն ղեկավարում էին հեղափոխական աշխատանքը։ Նրանք սկզբնական շրջանում հեկտոգրաֆի վրա թռուցիկներ էին տպագրում և տարածում բնակչության լայն շրջաններում։ Այդ թռուցիկներում հրապարակվում էին սոցիալ-դեմոկրատների լոզունգներն ու կոչերը։

Հեղափոխականորեն տրամադրված աշակերտները, մասնավորապես 1905 թ., սկսում են խոսքները մեկ անել և բացահայտ պայքարի դուրս գալ շահագործողների դեմ։ Նրանք պահանջում էին վերջ տալ դեսպոտիզմին, դպրոց-

2 ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 56, գործ 415, թ. 219։

ներից արձակել չինովնիկ ուսուցիչներին, փոխել դպրոցների ղեկավարությունը...

Շուշիում ղինված ընդհարումներ էին տեղի ունենում ոստիկանների և աշակերտների միջև։ Թեմական դպրոցի աշակերտներին աջակցում էին ռեալականում սովորողները։ Դեպքերի մասնակից Հարություն Թումյանը[3] պատմում է, որ ռուսական առաջին հեղափոխության օրերին թեմական դպրոցի 2-րդ և 4-րդ դասարանների աշակերտների ուժերով հրատարակվում էր «Կոչնակ» անլեգալ խմորատիպ ամսագիրը (յուրաքանչյուր համարը 10—12 էջից բաղկացած), որտեղ համառոտակի արտահայտում էին օրվա հոգսերը։ Այդտեղ հեղափոխական մտքերն ու հայրենասիրական մոտիվները մեծ մասամբ հրապարակ էին հանվում գրական փոքրիկ ստեղծագործությունների՝ բանաստեղծությունների և պատմվածքների միջոցով։ Տպագրվում էին շուշեցի Սիմոն Ֆոլյանի, Մարտիրոս Արղումանյանի և ուրիշների գործերը։

1912 թ. սկսած Շուշիի հոգևոր թեմական դպրոցի սովորողները համախմբված էին աշակերտական երկու կազմակերպությունում. «Միություն» և «Միրաժ» էին կոչվում դրանք։ Առաջինին հովանավորում էր դաշնակցական կուսակցությունը, իսկ «Միրաժ»-ին ցուցումներ էր տալիս ու ղեկավարում ՌՍԴԲԿ Շուշիի ընդհատակյա կոմիտեն։

1913 թ. սկսվում է հրատարակվել «Միրաժ» կազմակերպության համանուն անլեգալ խմորատիպ ամսագիրը, որի յուրաքանչյուր համարը ուներ 10—12 տետրակի թերթի ծավալ։ Այն տպագրում էին Սիմոն Ափյանը[4], Անդրանիկ Ավագյանը և Գրիգոր Խաչյանը[5]։

Ամսագրին աշխատակցում էին առաջադեմ մարդիկ։ Առանձնապես նրա խմբագիրը՝ Գրիգոր Մեհրաբյանը և սրբագրիչ Մկրտիչ Մելքումյանը, որոնք հոգով ու սրտով նվիրված էին աշխատավորական գործին, ամեն ջանք ներդնում էին «Միրաժ»-ը դարձնելու աշակերտության ընդհատակյա հեղափոխական աշխատանքի օջախն ու կենտրոնը։

Իր հուշերում Ս. Ափյանը պատմում է. «Տպարանը մեր տունն էր, թերթը տպագրում էինք խմորատիպ, այսինքն՝ գործ էինք ածում գլիցերին և ժելատին։

Միութենականները շատ են հետևել իմանալու մեր տպարանի տեղը, որպեսզի մատնեն մեզ, բայց մինչև վերջ էլ այդ նրանց չհաջողվեց։

Մեր և «Միության» պայքարը սկզբունքային հարցերի շուրջը մեծ մասամբ կատարվում էր «Միրաժ» ամսագրի միջոցով։ «Միրաժ»-ը լույս էին ընծայում

---

3 Նա մեծ գործ է կատարել Լեռնային Ղարաբաղում, մասնավորապես 1917—1920 թթ.։ Այժմ թոշակառու է և բնակվում է Երևանում։

4 Մեծ են Սիմոն Ափյանի ծառայությունները Լեռնային Ղարաբաղում՝ սովետական իշխանություն հաստատելու գործում։ Ծնվել է 1897 թ., Շուշիում, 1917—18 թթ. ավարտել է տեղի թեմական դպրոցը։ 1917 թ. մայիսից բոլշևիկյան կուսակցության անդամ է։ 1917—1920 թթ. Ղարաբաղի մի շարք գյուղերում ստեղծում է կուսակցական բջիջներ և ղեկավարում նրանց գործունեությունը։

Սովետական տարիներին ղեկավար աշխատանք է կատարում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում։ Այժմ անհատական կենսաթոշակառու է և բնակվում է Երևանում։

5 Անդրանիկ Ավագյանն ու Գրիգոր Խաչյանը կուսակցության շարքերն են մտնում 1917 թվականին։ Նրանք աչքի են ընկնում իբրև ժուռնալիստներ։ 1920-ական թվականներին խմբագրում են «Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթը։

50—60 օրինակով և մի ժամվա մեջ էլ ցրում էին։ Մեծ էր հատկապես ցրիչ Շմավոն Շահնազարյանի եռանդը. նա իսկույն տեղ էր հասցնում գրեթե բոլոր օրինակները...

Շատ մեծ հեղինակություն ուներ «Միրաժ»-ը աշակերտության և ուսուցիչների մի մասի մոտ։ Լույս ենք ընծայել այն մինչև 1917 թ. մարտ ամիսը։ Վերջին համարներից մի քանիսը անլեգալ ուղարկել ենք անգամ էջմիածին՝ ճեմարան, ընկ. Ա. Հովհաննիսյանին և ճեմարանում սովորող մեր տղաներին ու Բաքու՝ մի երկու-երեք ընկերոջ։

Սուր էր «Միրաժ» և «Միություն» պարբերականների պայքարը։ «Միրաժը» մերկացնում էր նացիոնալիստական տրամադրությունները, աշակերտությանը կոչ անում համախմբվել ինտերնացիոնալիզմի դրոշի տակ։

Հետագայում «միրաժականների» հետևողական պայքարի շնորհիվ լրիվ կազմալուծվեց «դաշնակցության» ազդեցության տակ գտնվող «Միություն» աշակերտական ընդհատակյա կազմակերպությունը և շատերն էլ իրենց կապերը լրիվ խզելով դաշնակցականներից, անցան «միրաժականների» շարքերը։

«Միրաժականների» հետ սերտ կապ ունեին արդեն ճանաչում գտած բոլշևիկները, որոնք օգտագործում էին բոլոր հնարավորությունները Ղարաբաղի աշխատավորությանը դուրս բերելու լուսավոր ափեր։

Մեծ անուն էր հանել աշակերտական «Ծիծաղ» խմորատիպ երգիծական ամսագիրը, որն սկսեց լույս տեսնել 1916 թ. Շուշիում։ Նրա շուրջը համախմբված աշխատակիցները խարազանում էին աշակերտության մեջ տեղ գտած թերությունները, սպանիչ ծաղրի ենթարկում հակահասարակական երևույթները։

Ամսագիրը հաճախակի դուրս էր գալիս դպրոցական շրջանակներից և ծավալուն ճակատով մերկացնում հետամնացությունը, սնոտիապաշտությունը, նախապաշարումներն ու գռեհիկ բարքերը։

«Ծիծաղ»-ի լեզուն սուր էր, խոսքը՝ հատու. նա քարկոծում էր նաև այն թերթուկներին, որոնք հանդգնում էին փաստերը ներկայացնել ծուռ հայելու մեջ։

1916 թ. Շուշիում մի խումբ աշակերտների հրատարակած «Պայքար» խմորատիպ շաբաթաթերթը, «Ծիծաղ» ամսագրի մահացու հարվածներից ըստիպված, երկրորդ համարը չունեցավ, դադարելով առհավետ։

«Ծիծաղ»-ի հարվածները սուր էին հատկապես այդ նորելուկ թերթուկի[6] նացիոնալիզմի հանդեպ, որը փորձում էր ազգայնական շիկացած մթնոլորտ ստեղծել Ղարաբաղի հայ և ադրբեջանցի աշխատավորների միջև։

«Ծիծաղ»-ը տարբեր առիթներով մերկացնում էր նաև աշակերտական այն պարբերականներին, որոնք փորձում էին ձուկ որսալ պղտոր ջրի մեջ, ծուռ հայելու մեջ ներկայացնել իրական փաստերը։

«Ծիծաղ»-ը սովորաբար տարածվում էր երեկոները՝ վստահություն վաստակած անձանց միջոցով։ Նրա յուրաքանչյուր համարը ընդունվում էր մեծ խանդավառությամբ։ Աշակերտները հիանում էին խոսքի դիպուկությունից ու հրատապությունից, տպագրված թևավոր խոսքերից, դարձվածքներից ու ժողովրդական իմաստությունների օգտագործումից։

---

6 Ի դեպ, այն մահացու հարվածներ ստացավ նաև «Միրաժ»-ի կողմից։

Շուշիի աշակերտական մամուլի պատմության մեջ կարևոր էջ են կազմում նաև «Սրինգ», «Աշակերտ» և «Նռանդ» խմորատիպ թերթերը, որոնք հրատարակել են թեմական դպրոցի ուսանողները։

Ինչպես նկատեցինք, աշակերտական կազմակերպությունները և նրանց տպագիր օրգանները մեծ դեր են խաղացել ոչ միայն սովորողների, պատանիների և աղջիկների կյանքում, այլև, ընդհանրապես, Ղարաբաղում հեղափոխական շարժումների ակտիվացման ու զարգացման գործում։ Այստեղ էլ անուրանալի են Շուշիի բոլշևիկների ներդրած ջանքերը։ Նրանք էին 1916—1917 թթ. ուղղություն տալիս աշակերտական առաջադեմ կազմակերպությունների գործունեությանը, ուղղում նրանց պայքարը աշխատավորական գործի հաղթանակին։